

ՄԱՅՐԵՆԻ ԽՕՍՔ. Ընթերցանութեան ձեռնարկ
կրտսեր դաստրանների համար, համառօտ
ըսողորով. Կազմեցին Կ. Կուսիկեանց եւ Լ.
Սարգսեանց. Թ. 1900.

Ինչպէս երևում է զրքի լառաջարանից՝ այս ձեռ-
նարկը պատրաստուած է «օտարախօս» հայ աշակերտնե-
րի համար, և պ. պ. Կուսիկեանցն ու Սարգսեանցն ա-
ւելորդ են համարել այդպիսի հայ երեխաներին որ և է
ժողովրդական հեքիսթ կամ երգ տալ սովորելու. մին-
չև անգամ ժողովրդական առած էլ չեն գտել զրքի մէջ
գետեղելու համար. այլ դորա փոխարէն Լ. ձուլարտեա-
նից և Փ. եպ. Այվազեանից են վերցրել մի քանի ան-
համ «ասացուածներ և առակաւոր խօսքեր»։ Օրինակի
համար, փոխանակ ասելու՝ «ուրիշի համար փոս փորողն
ինքը մէջը կ'ընկնի», այս նորագոյն մանկավարժները ա-
ւելի լաւ են համարում որ հայ երեխան սովորի.

Թէ ուրիշին փոս կը փորես՝
Նայէ որ շատ չը խորես,
Որ երբ դուն մէջը գըլորուես՝
Ողջ մընաս, ողջ դուրս ելնես.

Ա. մասի մի քառորդիցն աւելի տեղ են բռնում Փ.
Բարխուդարեանի «Մարդը և հրէշը» և Ղ. Աղայեանցի
«Արևամանուկը». մնացածի մէջ քանակութեան կողմից
աչքի են ընկնում Կախովի (և ո՛չ Կրիլովի) առակները,
որոնց թարգմանութիւնը (Փ. եպ. Այվազ.) պ. պ. Կու-
սիկեանցն ու Սարգսեանցը պարտք են համարել աղա-
ւաղելու, որպէս զի, երևի, «օտարախօս» հայ երեխանե-
րին աւելի մատչելի լինին։ «Մայրենի խօսքը» կազմող-
ներն այսպէս են հայերէն սովորեցնում. «Կապկին մէ-
կը, որ ծերայաւ աչքի ուժը պահած էր» կամ՝

«Ղշտացած կապիկը խոր ցաւով սրտի
Այնպէս է շարեւէ ակնոյցը քարի,
Որ փշուր-փշուր իսկոյն իւլէի».

Ի՞նչ է նշանակում.

«Մեր սանամօր ոչ թէ միայն աչքերը,
Ատամներն էլ իբրեւ քաղցր են»:

Լազարեանց ճեմարանի ուսուցիչները սովորեցնում են մեզ որ ասենք «ատամներս հորուեցին» և ոչ թէ «ատամներս առաւ», ասում են. «Բերանը մրմռաց. — «Իրաւ, ես շատ խենթ եմ եղիւ, որ ստամոքսի համար անուշեղ եմ ծամում, ինչ է՝ որ նա մարտէ նրան պարոնի նման ձգուած», և ուզում են որ հայ երեխան մարտէ այսպիսի նախադասութիւններ: Որուս գիւղացու խրճիթ չտեսած հայ մանուկը պիտի հասկանալ, թէ ի՞նչ է նըշանակում մէկին «վառարանի լետուը» նստեցնել. «սեղանը ծածկուած է» ասելիս պիտի գլխի բնկնենք որ «սեղան է բաց տրած» կամ «հաց է քցած»: «Անդամները, տեսնելով որ իրանց կորուստը մօտ է՝ ճանաչեցին յանձնարարը». ում յանցանքը Պ. պ. Կուսիկեանցի և Սարգսեանցի կարծիքով այս նշանակում է՝ «կանոնաւոր, սահուն լեզուով գրուած» ընթերցանութեան նիւթ տալ օտարախօս հայ երեխաներին. սովալն ո՞վ գիտէ, գուցէ այդպէս էլ պէտք է, «ի նկատի ունենալով հայ աշակերտների ուրոհ պայմանները: Երևի հէնց այդ բուրդն պայմաններն» աչքի առաջ ունենալով գրքի մէջ զետեղուած են մի քանի նախաջրհեղեղեան ոտանաւորներ, որ վաղուց մոռացուած են. ախր ի՞նչ էք հասկանում Ս. Նազարեանցի հռչակաւոր «Մայրենի լեզուի» այս տողերից.

«Ամեն տեղ փչում է Աստուծոյ շունչը,
Սուրբ է, պոհ, միւս պլ ձե ու ոճը» և այլն.

Յետոյ՝ երևի նոյն այդ «ուրույն պայմաններին» շնորհիւ է ներելի համարուում փոքր երեխաներին ամբողջ «Մայր-Արաքսին» դաս տալ, առանց բան հանելու, կամ «մեկնողական ընթերցանութեան» նիւթ դարձնել Պէշիկ-թաշլեանի «սիրոյ ժամերն ի յանտառին զմայլեցան» և այլն. կամ ի՞նչ երեխայի սովորելու բան է Պատկանեանի «ճապանագիր Ս. Բ. մանկան» ոտանաւորը: Միանգամայն անտեղի ենք համարում մի մանկական ընթերցանութեան ժողովածուի մէջ նաև Ա. Ահարոնեանցի

«Փշուր ըմ խաց» պատմութիւնը, որ սակայն ինքն ըստ ինքեան վատ բան չէ:

Մեր նորագոյն բանաստեղծներից մի բացառիկ սլա-
տուի արժանացել է այս գրքի մէջ Ա. Ծատուրեանը.
բայց ինչ ասենք այդ մասին, քանի որ պարզ նկատուում
է որ բանաստեղծութեան վերաբերութեամբ պ. պ. Կու-
սիկեանցն ու Սարգսեանցն իրենց «ուրոյն» ճաշակն ունին:

Մի փոքրիկ հարց էլ. ո՞ւմ և ինչի համար է գրքին
կցած «Համառօտ բողոքիւրքը». եթէ այս գիրքը «կրտսեր»
դասարանների համար է, այդ ո՞ր մանկավարժս կան օ-
րէնքով դուք փոքր երեխաներին տանը, բառարանի օգ-
նութեամբ, պատրաստելու դաս պիտի տաք:

Իրենց «Մայրենի խօսքով» պ. պ. Կուսիկեանցն ու
Սարգսեանցը մի անգամ ևս ապացուցանում են, որ մի-
գործ կատարելու համար բաւական չէ միայն բարի ցան-
կութիւն ունենալը:

Ս. Բ.

